

<p><b>Հանարդ</b> ԹԻՎ 24  <b>Տիպը</b> Պաշտոնական տեղեկատվություն  <b>Սկզբնաղբյուրը</b> ՀՀՊՏ 2007.01.17/4(528)  <b>Ընդունող մարմինը</b> Արդարադատության նախարարություն  <b>Ստորագրող մարմինը</b> Արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության վարչության պետ  <b>Վավերացնող մարմինը</b>  <b>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</b> 27.01.2007</p>	<p><b>Տեսակը</b> Մայր  <b>Կարգավիճակը</b> Գործում է  <b>Ընդունման վայրը</b> Երևան  <b>Ընդունման ամսաթիվը</b> 28.12.2006  <b>Ստորագրման ամսաթիվը</b> 28.12.2006  <b>Վավերացման ամսաթիվը</b>  <b>Ուժը կորցնելու ամսաթիվը</b></p>
--	--

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի «ՀՍԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԿԻՐԱՌՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ (ՀՕ-220-Ն) ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

**Հ Հ Ա Ր Դ Ա Ր Ա Դ Ա Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Ն Ա Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
 Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

ԹԻՎ 24

28 դեկտեմբերի 2006 թվականի

**2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի «ՀՍԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԿԻՐԱՌՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՕ-220-Ն) ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ և 91-րդ հոդվածի 5-րդ մասերի պահանջներից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը **հայտնում է, որ՝**

Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 66 (521) համարում հրապարակված 2006 թվականի նոյեմբերի 28-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» Հայաստանի Հանրապետության (ՀՕ-220-Ն) օրենքն ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ հունվարի 4-ից, թեև օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետ է նշված 2007 թվականի հունվարի 1-ը, քանի որ այն ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող նորմեր է պարունակում:

**Իրավական ակտերի  
 փորձաքննության  
 վարչության պետ՝**

**Կ. Խտրյան**